

Կոտայքում նոր աշխատատեղեր կլինեն. ե՞րբ և ինչպե՞ս

Չեղիակ՝ [Lilit Hakobyan](#)

Նախօրեին Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոյանը ֆեյսբուքի իր էջում գրառում էր կատարել: Նրա խոսքով Կոտայքում լուրջ ներդրումներ են սպասվում:

«Հանքավան գյուղում նորագույն տեխնոլոգիաներով հագեցած առողջարանա-հյուրանոցային համալիրի ստեղծման ծրագրին ես հավանություն տվեցի, համարելով այն լավագույններից՝ աշխատատեղերի քանակի, աշխատավարձերի նվազագույն շեմի և այլ ծրագրային կետերի առումով:

Համալիրը կառուցելու համար նախատեսվում է ներդնել շուրջ 10 միլիոն ԱՄՆ դոլար», -ասվում է գրառման մեջ:

[VNews.am](#)-ի թղթակիցը գրուցեց մարզպետի հետ:

–Պարո՞ն Պետրոյան, որքանո՞վ է իրատեսական այս ծրագիրը:

-Առողջարանա-հյուրանոցային համալիր է լինելու: Այն տեղակայված է լինելու Մարմարիկի ջրամբարից դեպի Հանքավան գյուղ ընկած հատվածում: Այնտեղ խորհրդային ժառանգություն կա՝ «Խոտոր ջուր» առողջարանն է եղել ժամանակին: Այն երկարաժամկետ վարձակալության հիմունքներով հանձնված է անհատների:

Այժմ բանակցում ենք այդ անհատների հետ, որպեսզի նրանք իրենց վարձակալության իրավունքը շուկայական արժեքի դիմաց գիջեն մեր ներդրողներին: Շրջակա հողերի սեփականատերերի հետ ևս բանակցում են մեր ներդրողները: Արդյունքում հնարավոր կլինի մոտ 30-35 հեկտար տարածքի վրա ամբողջական համալիր կառուցել:

Հավանաբար փետրվարին գործարքները կկատարվեն: Գարնանը ձեռնամուխ կլինենք առկա շենքերի հիմնադրումներին: Նոր շենքերի համար կմեկնարկեն նախագծային, նախահաշվային գործընթացներ:

Իր բնույթով լինելու է բարձրակարգ՝ 4 և ավելի աստղ: Գնային առաջարկը մատչելի է լինելու: Նախատեսված է Էկոնոմ դասի քաղաքացիների համար:

–Դուք բազմիցս ասել եք, որ ներդրումների արդյունքում արժանապատիվ աշխատավարձով աշխատատեղեր են լինելու: Ի՞նչ նկատի ունեք:

-Այն աշխատավարձային շեմը, որը գործում է, օրինակ, Ծաղկածորի և Աղվերանի հյուրանոցներում, բավականին ցածր է: Խոսքը վերաբերում է սպասարկող անձնակազմին: Նրանք ստանում 50, 60 մինչև 80 հազար դրամ աշխատավարձ: Մենք նոր ներդրողներին այդ հարցերն ենք ուղղում:

Մենք պետք է համոզված լինենք, որ այն ներդրումները, որոնք բերում ենք մարզ, իրենց աշխատավարձային ֆոնդերով և սոցիալական բաղադրիչով եականորեն տարբերվելու են գործող բիզնես մոդելներից: Մենք մատնանշում ենք Հայաստանում միջին աշխատավարձի չափը՝ 160-180 հազար դրամ: Գոնե այդ թիվը պետք է պահեն:

–Ե՞րբ պատրաստ կլինի համալիրը:

-Առաջին հյուրերը, ըստ պլանի, կընդունվեն 2020թ.-ից: Այսինքն շինարարությունը սկսելուց մոտ 1.5-2 տարվա ընթացքում: Մինչ այդ բուն շինարարական աշխատանքներ են կատարվելու:

–Այս պահին այլ ներդրումային ծրագրեր կա՞ն:

-Հենց այսօր ևս քննարկումներ էինք անում: Շուրջ 20 բիզնես ծրագրեր ունենք: Դրանք հիմնականում 4 ոլորտների են առնչվում՝ տուրիզմ և հյուրընկալություն, տեխնոլոգիական և ինտենսիվ այգեգործություն, ադամանադագործություն և վերականգնվող էներգետիկա: Այս ծրագրերը տարբեր փուլերում են գտնվում: Հիմնականում դրսի կապիտալ է: Դրսից պետք է ներդրումներ հոսեն Հայաստան:

Մարզի բոլոր մասերում մենք ուսումնասիրում ենք տվյալ համայնքի պոտենցիալը: Մեր ներդրողներին էլ ուղղորդում ենք կոնկրետ համայնք՝ կոնկրետ բիզնես մոդելով, որպեսզի յուրաքանչյուր համայնքում կարողանանք որոշակի առաջընթաց ապահովել:

Աղբյուրը՝ [vnews.am](https://www.vnews.am)

<https://www.vnews.am/newsplus/kotayqum-nor-ashxatatexer-klinen-erb-ev-inchpes/>